ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

20 մայիսի 2026 թվական

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ
ՀԱՅԿ ԱՐԱՐԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՎԻՊԱՇԽԱՐՀԸ»
ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի 20. 05. 2026 թ. 4-րդ նիստին մասնակցում էին բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Մարգարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Զարինե Սառաջյանը, Սիրանուշ Փարսադանյանը, Նառա Սարգսյանը: Գրավոր կարծիք էին ներկայացրել բանասիրական գիտությունների թեկնածուներ Արամ Ալեքսանյանը, Թադևոս Խաչատրյանը:

ԼՍԵՑԻՆ՝ ՀԱՅԿ ԱՐԱՐԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՎԻՊԱՇԽԱՐՀԸ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը Երևանի պետական համալսարանում գործող ԲԿԳԿ-ի՝ գրականագիտության 012 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ ժ. 01. 01- «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Մարգարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս

Դեմիրճյանը, բանասիրության թեկնածուներ Սիրանուշ Փարսադանյանը, Զարինե Սառաջյանը, Նառա Սարգսյանը:

Նշվեց, որ Հայկ Հովհաննիսյանի գիտական ուսումնասիրությունը կատարվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնում: Ատենախոսության ղեկավարը բազմավաստակ գիտնական, գրականության պատմության ու տեսության բացառիկ մասնագետ Ալբերտ Մակարյանն է, ում հոգածությունն ու արգասաբեր ուղղորդումները զգալի են ուսումնասիրության գրեթե բոլոր էջերում:

Պաշտպանության է ներկայացվել մի համապարփակ հետազոտություն, որը աչքի է ընկնում գիտական հստակ հարցադրումներով, որոշակիորեն նախանշված հայեցությամբ և առաջադիր խնդիրների լուծման արդյունավետությամբ:

«Զապել Եսայանի վիպաշխարհը» թեմայով ատենախոսությունը նվիրված է մեծանուն գրող, հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, թարգմանիչ ու մշակութաբան Զապել Եսայանի գեղարվեստական արձակի պոետիկայի, մասնավորապես նրա վիպաշխարհի ժանրային, գեղարվեստական և գաղափարական առանձնահատկությունների ուսումնասիրությանը, որ խիստ կարևոր նշանակություն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով:

Հայ գրականության պատմության մեջ հետաքրքիր էջ է ձևավորել Զապել Եսայանի կյանքի ու գրական ժառանգության քննությունը: Հայրենի գրականագիտությունը, անցած մի քանի տասնամյակներին Հայրենիքում և Սփյուռքում բազմաթիվ առիթներով անդրադառնալով Եսայանի գրական ու հրապարակախոսական ժառանգությանը, հիմնականում, սակայն, քննության է առել մասնավոր հարցեր ու խնդիրներ, կարևորել գրողի դերը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի (մինչև 30-ական թվականներ) գրականության մեջ:

«Զապել Եսայանի վիպաշխարհը» ատենախոսության հեղինակ Հայկ Հովհաննիսյանը, հղումներ կատարելով աշխատանքում օգտագործված և գրականության ցանկում բերված բոլոր հրապարակումներին, իրավացիորեն նշում է, որ Զ. Եսայանի վիպաշխարհը դեռևս ամբողջական հետազոտության չի արժանացել.

գրականագիտական միակ ամբողջական ուսումնասիրությունը պրոֆեսոր Սնակ Արզումանյանի բարձրարժեք մենագրությունն է՝ նվիրված տաղանդաշատ գրագիտուհու կյանքին և գործին:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այդ բացը լրացնելու հանձնառությամբ, նաև այն հանգամանքով, որ ներկայում հայ գրականագիտության մեջ զգալիորեն աճել է հետաքրքրությունը արևմտահայ գրականության, կին գրողների, առանձնապես Զապել Եսայանի ստեղծագործական ժառանգության նկատմամբ: Այս համատեքստում կատարված հետազոտությունը կարևոր ներդրում է տակավին չլուսաբանված գիտական խնդիրների ուսումնասիրման և լուծման ուղղությամբ:

Ուսումնասիրության ամբողջականությունն ապահովելու համար Հովհաննիսյանը ատենախոսության մեջ ուրվագծել է գրողի ստեղծագործական որոնումների հետագիծը, հստակեցրել Զ. Եսայանի արձակի ժանրային տարբերակումները (նորավեպ-պատմվածք, հուշագրություն-ուղեգրություն-ինքնակենսագրություն և այլն), ինչպես նաև կատարվել է երկերի թեմատիկ հստակ բաժանում: Ատենախոսը միաժամանակ մանրամասնորեն ներկայացրել է տաղանդաշատ գրագիտուհու ստեղծագործական ընթացքին ուղեկցող քննադատական դիտումների, գրական բանավեճերի, գաղափարական ու գեղագիտական բազմաբնույթ, երբեմն իրարամերժ հարցադրումների պատմությունը, արժևորել հայ գրականության պատմության մեջ Եսայանի ունեցած կարևոր դերը:

Ատենախոսության կարևոր ելակետերից է ուսումնասիրվող հեղինակի անձն ու գործը նրա ապրած որոշակի ժամանակի մեջ (մասնավորապես՝ Զ. Եսայանի խորհրդային տարիներին վերաբերող հատվածում) դիտարկելու սկզբունքը, ինչը առաջնային պայման է օբյեկտիվ ու ճշմարտացի գնահատման համար: Արդարացված է նաև Զ. Եսայանի արձակը որոշակի շրջափուլերի բաժանելու սկզբունքը՝ ըստ նկարագրվող միջավայրերի (Պոլիս, Փարիզ, Կիլիկիա, Խորհրդային Հայաստան):

Այս իմաստով ուսումնասիրության մեջ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Զապել Եսայանի կենսապատումը, նրա՝ մարդկային չափերից մեծ կյանքի բազմաթիվ առեղծածային դրվագների ու մահվան հանգամանքների ուսումնասիրությունը,

որի հիմքում արխիվային բազմաթիվ նորահայտ, անգամ մասնագիտական հանրույթին անծանոթ նյութերի շրջանառությունն է, դրանց խորքային իմացությունը:

Ավելին, հետազոտության հեղինակը շատ հաճախ արխիվային փաստաթղթերն ու վավերագրական նյութերը դիտարկել է որպես գրական երկերի մեկնաբանման կարևոր աղբյուր, ելակետ՝ իրականության և գրականության արանքում ձևաբանելով գրողի փիլիսոփայական հայացքը մարդկային ճակատագրերի ու ներհակ սկզբունքների և մտայնությունների մեջ տրոհված ժամանակի վերաբերյալ:

Այս իրողությունը առաջին հերթին մեծացնում է կենսագրական-հոգեբանական հետազոտական մեթոդի կշիռը ատենախոսության շարադրանքում՝ շեշտադրելով ստեղծագործության հղացման պատմական, կենսագրական, հոգեբանական կոնկրետ-ճանաչելի ազդակները, գեղարվեստական տարածության մեջ որոշակիացնելով հարաբերություններն ու իրողությունները շղթայակցող պատճառահետևանքային կապերը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնք տրոհված են առանձին ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է շուրջ 130 էջ:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացրել թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, կիրառված մեթոդները, ինչպես նաև աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Առանձնապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակը փորձել է Զապել Եսայանի արձակը դիտարկել ժամանակակից գրականագիտական մեթոդների համադրմամբ՝ զերծ մնալով գաղափարական կանխակալ մոտեցումներից:

Ատենախոսության առաջին գլխում (**«Զապել Եսայանի սոցիալ-հոգեբանական փոքր արձակը»**) ուսումնասիրվում են Զապել Եսայանի փոքր արձակի պոետիկան, նրա թեմատիկ, ժանրային առանձնահատկությունները: Հեղինակը կատարել է թեմային առնչվող գիտական գրականության համակողմանի վերլուծություն, ներկայացրել առկա մոտեցումները և հիմնավորել սեփական դիրքորոշումը: Հատկապես արժեքավոր է

ստեղծագործությունների ժանրային հստակեցման փորձը, ինչը կարևոր նշանակություն ունի եսայանագիտության հետագա զարգացման համար:

Հայկ Հովհաննիսյանի գիտական հետազոտության մեջ քննվող ստեղծագործությունները հնարավորինս օբյեկտիվ են գնահատվել. բարձր գեղարվեստականությունից զատ՝ մատնանշվել են տվյալ երկի թերությունները, «ստվերոտ» կողմերը՝ անհարկի ձգձգումները, «մանվածապատ» դիպաշարը և այլն:

Կարևոր է ընդգծել, որ Եսայանի երկերի քննությունը տարվում է ժամանակի գրականության և մշակույթի համապատկերում՝ քննողաբար շարադրանք ներմուծելով և կիրարկելով ժամանակակից հեղինակների արձագանքներն ու գնահատումները:

Շարադրանքի որոշակի հատվածներում, այնուհանդերձ, գերակշռում է նկարագրական տարրը: Ուսումնասիրությունն առավել կշահեր, եթե նկարագրական դիտումներին զուգահեռ՝ ավելի մեծ տեղ հատկացվեր տեսական-վերլուծական ընդհանրացումներին: Առաջարկում ենք հետագա հետազոտական աշխատանքներում շեշտը դնել նկարագրված երևույթների պատճառահետևանքային կապերի ավելի խորքային վերլուծության վրա:

Գիտական առումով առավել արդյունավետ է ատենախոսության երկրորդ գլուխը (**«Ժամանակաշրջանը և մարդը Զապել Եսայանի վիպաշխարհում»**), որտեղ քննության են առնվում ժամանակաշրջանի և մարդու փոխհարաբերությունները Զապել Եսայանի վիպաշխարհում: Հայկ Հովհաննիսյանն այստեղ վերլուծում է պոլսյան, փարիզյան, կիլիկյան և խորհրդային ժամանակաշրջանների արտացոլումը Եսայանի արձակում, ցուցանում ժամանակի ազդեցությունը կերպարների մարդկային ու հոգեբանական նկարագրի վրա, հնարավոր դարձնում ժամանակաշրջանի և կոնկրետ միջավայրի ստորոգելիներով պատճառաբանել քննվող ստեղծագործության գաղափարական խնդրադրությունն ու գեղարվեստական միջոցների ընտրության հանգամանքը:

Ատենախոսը կարողանում է բացահայտել, վերլուծել Զ. Եսայանի՝ քննվող ստեղծագործությունների սոցիալական, հոգեբանական, գեղարվեստական նրբին շեշտադրումները, առանձնացնել կոնցեպտուալ հատվածները: Նա վերլուծում է մարդու հասարակական գոյության ներքին ճգնաժամերն ու վարքագծի շարժառիթները, կնոջ

հոգեբանության, տղամարդու հոգեկերտվածքի բարդագույն գծերը, որոնք պատկերել է հեղինակը:

Կարևորենք մի հանգամանք: Ըստ ատենախոսի, հետազոտողները հիմնականում ընդգծել են Զապել Եսայանի երկերի ֆեմինիստական խնդրադրությունը՝ դրանց գեղարվեստական, պատումային, ոճական, յուրահատկությունները բխեցնելով այդ միջուկից:

Հայկ Հովհաննիսյանը նախ փորձում է խորքային քննության ենթարկել «ֆեմինիզմ» եզրույթը, կանանց ձայնը այդ շրջանի գրականության մեջ, ցուցանել Զապել Եսայանի հրապարակագրության ու ստեղծագործության առնչությունը ֆեմինիստական գաղափարախոսությանը:

Ապա վերլուծաբար համեմատում է Զ. Եսայանի և ժամանակի արևմտահայ մյուս կին գրողների երկերը, ներկայացնում Եսայանի ստեղծագործության մեջ առկա հոգեբանական-ոճական առանձնահատկությունները ոչ միայն սոցիալ-հասարակական ելակետից, ֆեմինիզմի դիտանկյունից, այլև իբրև կնոջ **ներքին ազատության** թեմա, անհատական ու հոգեբանական ինքնաստեղծումի ճիգ՝ Եսայանի օգտագործած մեթոդը բնութագրելով իբրև **հոգեբանական ռեալիզմ**:

Այդուհանդերձ, մի քանի դիտարկում.

ա) Զ. Եսայանի «Կեղծ հանճարներ» վիպակի առիթով խոսելով Տաճատ Չարըքյանի կերպարում Տիրան Չրաքյան-Ինտրայի նախատիպ լինելու մասին՝ Հ. Հովհաննիսյանը գրում է, որ վերջինս «... որոշ ժամանակ ապրել և ստեղծագործել է Փարիզում...»: Իրականում Ինտրան Փարիզում եղել է ընդամենը 1897 թ. հուլիսի 3-ից սեպտեմբերի 20-21-ը՝ դեպի Եգիպտոս ծրագրված ուղևորության ճանապարհին: Թեև նշված առիթով հղում կա բանասիրության դոկտոր Պ. Դեմիրճյանի՝ Ինտրայի կյանքին և գործին նվիրված մենագրությանը, սակայն, կարծում ենք, արժեր, որ ատենախոսության հեղինակը մի փոքր ավելի հստակ արտահայտեր իր կարծիքը այդ ինքնատիպ գրողի կերպարի և ստեղծագործական էության նկատմամբ Զ. Եսայանի տված երգիծական, ծայրահեղ տեսակետների վերաբերյալ:

բ) Կա սրբագրման անհրաժեշտություն. աշխատանքում նկատվում են որոշ վրիպումներ և վրիպակներ, առանձին ձևակերպումներ խմբագրական և լեզվաոճական հղկման դեպքում առավել կլավարկվեն:

գ) Բացակայում է Ա. Չոպանյանից մեջբերման հղումը (23):

Կարծում ենք, նշված վրիպակները ամենևին չեն ստվերում կատարված մեծածավալ հետազոտության տպավորությունը:

Հ. Հովհաննիսյանի ատենախոսությունը ամբողջության մեջ համապատասխանում է թեկնածուական աշխատանքի համար սահմանված պահանջներին, ունի գիտահետազոտական բավարար մակարդակ, շարադրված է գրագետ հայերենով, հեռանկարում կարող է հենք դառնալ շարունակական ուսումնասիրությունների համար: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել հայ գրականության պատմությանը, արևմտահայ գրականությանը, ինչպես նաև կին գրողներին առնչվող դասընթացներում, մասնագիտական հետազոտություններում և ուսումնական ձեռնարկների կազմման ընթացքում:

Հեղինակի առաջադրած դրույթները հիմնավորված են, եզրակացությունները՝ տրամաբանական. բխում են կատարված հետազոտությունից: Աշխատանքում զգացվում է հեղինակի խոր հետաքրքրվածությունը ուսումնասիրվող նյութի նկատմամբ, ինչպես նաև գրականագիտական վերլուծության ջանասիրությունը:

Սեղմագիրն ու ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական ամսագրերում հրապարակված հոդվածներն ամբողջությամբ արտացոլում են շարադրանքի հիմնարար դրույթներն ու համապատասխանում են պաշտպանության ներկայացված ատենախոսությանը:

Ատենախոսը, ըստ ամենայնի, հասել է առաջադրված խնդրի գիտական բացահայտմանն ու ամբողջացմանը և արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայկ Արարատի Հովհաննիսյանի «Զապել Եսայանի վիպաշխարհը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին և ժ. 01.01- «Հայ միջնադարյան և նոր գրականության» թվանիշին: Այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան հայ նոր գրականության բաժինը միջնորդում է Երևանի պետական համալսարանի գրականագիտության 012 մասնագիտական

խորհրդին՝ Հայկ Արարատի Հովհաննիսյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Սիրանուշ Մարգարյան

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի

հայ նոր գրականության բաժնի վարիչ,

բանասիրական գիտությունների թեկնածու,

դոցենտ

Նիստի քարտուղար՝ **Սիրանուշ Փարսադանյան**

բանասիրական գիտությունների թեկնածու

Հաստատում եմ՝ 20 մայիսի 2026 թվական